

ՔԱՐՏԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուշկարիոյ համար	12 ծր.
Տարեկան	6 »
Վեցամսեայ	6 »
Արտասահմանի համար տարեկան	15 »
Վեցամսեայ	8 »

Սակերիկայի համար	3 սր.
Տարեկան	1.50 »
Վեցամսեայ	1.50 »

Երանուշակ սոյո սուս թիւ երեսն համար 40 ս իսկ վերջիններս համար 20 սակերիկ հ. կրե ինն աւելի անգամներու համար 20 0/0 զեղչ կը լայ:

Վառնայի համար ձեռք 40 սակերիկ

ՉԱՐՔՈՒՄ

ՆՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՂՎԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏՄԱՐԱԿՈՒԹԻ ՉՈՐԵՔԵՆԱԲԹԻ ԵՒ ԵԱՐԱԹ ՕՐԵՐԸ

Նախկին և նորմ զրկի և նրա գրութեան հասցիին

Редакция на вѣстникъ „Шаржумъ“ Варна

Redaction du journal „Charjoum“ Varna (Bulgarie)

Արտասահմանի համար ձեռք
(20 ՍԱԿԵՐԻԿ)
Պուշկարիոյ համար ձեռք
(15 ՍԱԿԵՐԻԿ)

Գրութեան և ներքին տպագրութեան

«ՇԱՐՔՈՒՄ»-Ի ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺՆԵԳԻՆԸ ՊԵՏՔ Ե ԿԱՆՆԻԿ ՎՃԱՐԷ

ՀՐԱԿԻՐ ԳԹՈՒԹԵԱՆ

Վերջին օրերու Ձէյթունի մէջ տիրող ծագկախարի համաճարակին դէմ մարտնչելու համար դժբախտ անմիջակա՞ն օգնութեան պէտք ըլլալով, Խորհուրդս որոշած է ինչ անձամբ հանգանակութեան ելնել, վստահ լինելով որ արգոյ հայ հասարակութիւնը սիրալոյսով պիտի մասնակցի սոյն բարեգործական ձեռնարկին՝ առատաձեռնօրէն նուրբելով իր լուծման:

Խորհուրդս այս առթիւ կը ծանուցանէ նաեւ պատուարժան հայ հասարակութեան թէ՛ Խորհրդոյս պաշտօնական կնիքը կրող տետրի ձեռքն ունեցող անձինք միայն արտօնուած են սոյն բարեգործական նպատակին համար ձեռնարկելու հանգանակութեան քաղաքին մէջ:

Ի դիմաց Թաղական Խորհրդոյ Ատենադպիր Ատենապետ Ս. Գաբրիելեան Յ. Մ. Թովմասեան 5 Մայիս 1903 Վառնա

ՁԵՅԹՈՒՆԻ ՀԱՍԱՐ

Ուրախութեամբ կը հրատարակենք այսօր տեղւոյս պատուարժան Թաղական Խորհուրդին հրաւերը, որով կը յայտարարէ անկախ թէ որոշած է ինք շրջիլ Ձէյթունի կարօտեալներուն նըպատ հանգանակելու համար:

Միւս կողմէն նոյնպէս ուրախութեամբ կը տեղեկանանք թէ՛ Վառնայի հայ հասարակութիւնը անհամբեր կը սպասէ հանգանակութեան բացուելուն՝ ժամառաջ մատուցանելու համար իր օգնութիւնը՝ անվեհեր Հայ Լեւոնականներուն:

Պոլսոյ թերթերուն բերած նորագոյն լուրերուն նայելով՝ վերջերս գոյուած են նաեւ Հաճընի որբանոցները և որբերը առժամանակեայ կերպով տեղացի հայ

յերուն տունները ցրուած, որովհետեւ Պատրիարքարանը դադարեցուցեր է իր նպատակները:

Ձէյթունցի որբեր ալ ըլլալուն անշուշտ հոն. ինչ պիտի ըլլան անոնք:

Վառնայի Պատուարժան Խաղական Խորհուրդը թող ներքէ մեզ՝ եթէ նկատենք թէ ճիշտ բառը չէ իր յայտարարութեան խորագիրը «Թերթեան» հրաւերը չէ անիկայ՝ այլ «Պատուարժան շուքեան» հրաւերը:

Սոյն փառաւոր պատերազմները, որոնք Ձէյթունցի Մարտիկներէն թուրք բռնակալութեան դէմ մղուեցան, մեծամեծ պարտակալ նուիրենք դրած են մեր վերան:

Հայկական Խնդիրը հիմակուան ունեցածին չափ ալ չպիտի ունենար ասպետական գոյն՝ եթէ չըլլար Ձէյթուն, պաշտելի Սասունին այս մեծ եղբայրը, ինչպէս կըսէ Ղարիբ:

Հայ ազգին պատերազմական յատկութիւնները բոլորովին պիտի ուրացուէին հիմա՝ եթէ չըլլային՝ առաջ Ձէյթուն և յետոյ Սասուն:

Մեր գծաբախտութիւնները իբր նախատինք մեր երեսին նետող անմիտներուն դէմ՝ ո՞ր պիտի գտնուէին այնքան ջախջախիչ ապացոյցներ, եթէ չըլլային Ձէյթունի Հայկական Բանակին փառայից յաղթութիւնները՝ Օսմանեան կայսրութեան ամենէն ճարպիկ զօրավարներէն առաջնորդուած ստուար բանակներուն դէմ:

Անցեալները օտար թերթի մը կողմէն ամբողջ հայ ազգի գլխին թափուած այնքան ապարդի անարգանքներուն դէմ՝ դեռ չարթնալով «Նարտու՞մ» մէջ հրատարակուած պատասխաններէն թանկագին փառքը՝ նորէն այն գիցազնական պատերազմ էր, զոր 95ին միջցին 6000 Ձէյթունցի հայ զինուորներ:

Ո՞վ կրնայ չափել մեծութիւնը մեր պարտականութիւններուն:

Ո՞վ պիտի կրնայ դէմ ելլել իր

խնդին, խնդրել իր զգացումները և շօգնել Ձէյթունցիներուն:

Ո՞վ պիտի կրնայ զրկել ինքզինք՝ ժամանակակից հայ զինուոր սփռութիւն հեշտանքէն:

Ո՞վ պիտի կրնայ զիմադրել քաղցած Ձէյթունցիին պատաւ մը հաց տալու հրապոյրին:

Ո՞վ պիտի կրնայ առանց փղձկելու լսել ողբը Ձէյթունցի որբիկին:

Եւ ո՞վ պիտի հրաժարի ազգային տառապանքի այս սեւ օրերուն՝ Ձէյթունին օգնելով սրտի մխիթարութեան այս բաժակն ըմպելու հաճոյքէն:

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

Յիշիկի, 28 ապրիլ

Գրասիրաց եղբայրութեան վարչութիւնը ի նպատակ Մատենադարան-Ընթերցարանին նուազահանգէս մը տուաւ ապրիլ 26ին շարժելու քաղաքի Երզնգիկ Թատր. երկսեռ խումբի միջոցաւ:

Երզնգիկ արական խումբի կողմէ երգուեցաւ «Կոչ», «Հայ եղբայրներ» և «Մարտի դաշտը» իսկ խումբ խումբով երգուեցաւ «Հայ հայրուհիներ», «Գայեթ տեսք» և «Կախաղան»:

Աս վերջին երկու երգերը, որոնք երգեցիկի հանգէսներուն անբաժան զարգ սկսած են կազմել, ո՞րքան կերպովն՝ այնքան համով կը դառնան կարծես: Անանկ կերպով որ այս երկու երգերուն պիտի ընկերակցի նաեւ «Մարտի դաշտը», որ այնքան գեղեցիկ է և խոր տպաւորութիւն կը թողու: «Գայեթ տեսք» և «Կախաղան» կրկնուեցաւ բուռն ծափահարութիւններու տակ: Խումբին ուսուցիչ պ. Բորով պ. Մ. Սանտալեանի հետ միասին երկու լաւ կտորներ նուազեցին Ֆիլիթով զաշնակի ընկերակցութեամբ: Օր. Չ. Դաւիթեան կարգաց «Ղարիպի տիրացու Գրիգորը» և ըսեմ որ «Ղարիպի» կտորները կարծէ որ անպատ-

ճառ կարգացուին ու միշտ կարգացուին մեր հանգէսներուն մէջ, քանի որ հոն գտնուող հասարակութեանց հարիւրին տասը հազիւ կարգացած է և որքան կարգացուի իր համը կը պահէ, անի խոր տպաւորութիւն կը թողու կարգացողներուն վրայ կարծես: Ս. Պ. Թէլալեան ընթերցարանի օգուտը և անոր անընթաց շարժումը մը ըլլալը բացատրեց գրաւոր-թէեւ քիչ մը բանաստեղծօրէն-և քանի մը հակիրճ տեղեկութիւններ տուաւ Գր. Նըրայրութեան անցեալին և ներկային վրայ: Գէշ չէր շիտակը ըսել վարչութեան անդամ շեղող անհասարակ կարծիքները ընթերցարան մատենադարանին մասին: Այդ տեսակէտով, իբրեւ ունկնդիր մը և Գր. եղբայրութեան ալ անդամ, ուրախ եկայ Ս. Թէլալեանը լսելով ():

Պ. Մ. կարապետեան զաշնակի ընկերակցութեամբ նկարներ գրածեց և պէսպիսութիւն մը տուաւ գօնասէրին:

Նուազահանգէսը իր ամբողջութեամբ բաւական յաջող դուրս եկաւ, միայն պարտականութեամբ քիչ մը նիհար էր պիտի ըսէի եթէ բաղձացուած չափով հասարակութիւն ներկայ եղած ըլլար հոն:

Օթեակները թէեւ քիչ թէ շատ ծախուած, բայց աթոռներուն մեծ մասը պարապ էր: Երբ քտարուան մէջ սա առաջին անգամ է որ երգեցիկ կազմակերպած հանգէսներուն կամերկայացուցումներուն ասանկ քիչ հասարակութիւն մը ներկայ կըլլայ: Եւ երգեցիկի անգամները ատանկ բան տեսած չըլլալով կարծես սրտերնին կտորած էր:

Երբ «Լիբրեթմպուրկը» ծայրէ ի ծայր լեցուելով հազիւ 250-300 զուտ հասոյթ չբերէ-սովորական գներով-անանկ կը կարծեմ որ աննշան բան մը մնացած է այս երկու թէն ընթերցարանին: Մինչեւ հիմա, հակառակ թա-

(?) Ընթերցարան-Մատենադարանի մասին յաջորդով:

փուած ջանքերուն, որքան զիտեմ, քիչեր են—որոնց մէջ կան երեք շորս հարուստներ ալ—որ ինքնաբերաբար տոմսակներ կուզեն կամ տարուած տոմսակը մէկ անգամով կառնեն, ի հարկէ քիչ թէ շատ նկատի առնելով իրենց սրտի մօտ նպատակը: Անդին ստուար մաս մը կայ որ բնաւ չառնէր, չի մօտենար, և ի թէ ասոնց մէջէն առնողներ ըլլան, հարգար «միննէթով» կառնեն, ան ալ ոչ թէ նպատակի կամ օգուտ մը ընելու համար, այլ՝ որովհետեւ այսինչ անձը իրեն տոմսակ է բերեր:

Եւ երեւակայեցեք թէ ի՞նչ արգիւնք կը ըլլայ եթէ սասնկ հասարակութեան մէջ տոմսակ ծախելու հոգը մէկ մարդու վրայ ձգուի, ինչպէս որ եղած էր սեւածիս հաւատարմով:

Յհա թէ ինչ առարկութիւններ կը ընեն երբ տոմսակ կառաջարկուի—«գուզում, օղբը տաք են, ի՞նչպէս գամ, ներկայացում չէ որ գամ, երզը ի՞նչ ընեմ, Եստ նեմք, չեմ, դերասանական խումբը ամէն շարժ կը բերէր, իբր թէ Գրասիրացի կամ երգեցիկը բերած ըլլար, ընթերցարան եկողը ով է որ անոր գրած տամ, ես տասը տարի ամսակին վճարած եմ, բայց զիս հասնելուն համար սրբողած եմ» և զեռ ինչն»:

Ես չեմ կրնար մեղադրել էս նախ գաստկարգը, որ գրեթէ միշտ եկած է ասկէ առաջուան ներկայացումներուն, որ երգեցիկը տուած է այսինչ կամ այն ինչ նպատակին համար:

Ինչո՞ւ մեղադրեմ անոնք՝ երբ հորուստը, տեղացի տարրը անտարբեր մնաց:

Գրասիրացիին տուածը ներկայացում չէր որ մեր ջոջերուն «Պոլսոյ շահերը վտանգէր» ոչ ալ յեղափոխական նպատակի համար էր—տուածը ի նպատակ գերասիրացի գոնէր մըն էր, ուր ամէն մարդ կրնար գալ, կամ չեկողն ալ նուէր մը կրնար տալ, Սահ պերճախօս փաստ մըն է որ ատ կարգի առարկութիւնները լոկ գրամ չի տալու համար է:

Իսկ ո՞ւր էր կոնկրետ տարրը, ուրկէ հազիւ 2-3 ընտանիք կարո Գրասիրացի եղբայրութիւնը իր 20 տարուան գոյութիւնովը Թիւրքիէի փոխնէն հին և պատուաբեր ընկերութիւնն է. և ատի քաջալերել, անոր ուժ տալ տեղացիներուն վրայ աւելի կը ծանրանայ, երբ իրենք շատ առիթներով մասնաւոր նախանձախնդրութիւն ցոյց տուած են. ամերն էրին, ո՞ւր էին գոնէ այս երեկոյթին:

Շատ խօսքն ետքը, շարժաթիւրիկուան դէպի ընթերցարանին նպատակ ցոյց տուած այս վերա-

բերումը պատիւ չի բերեր Թիւրքիէի հասարակութեան ընդհանրապէս, հարուստներուն, տեղացի ջոջերուն մասնաւորապէս:

Թղթակից

...Սմբագիր
Սորհուրդս... ներկայիս կը սիրէ յուսալ թէ՛ պիտի բարեհաճիք նորոնութեամբ հրատարակել մեր պաշտօնական յայտարարութիւնը:

Ի դիմաց Թաղական Սորհուրդի Ատենադպիր Ատենապետ Ա. Ազեհեան և Ս. Ալքուեան (Կնիք)

28/4 մայիս 1903
Գոնսթանշա

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԶԱՅԱՐԱՐՈՒԹԻՒՆ

«Իրաւունք» թերթի ներկայ 1903 տարուայ 31 թուով հրատարակուած «մեր առաջարկը Գոնսթանշացոց» վերնագրով գրութեան մը մէջ նոյն թերթի խմբագիր Աթէնքի Տ. Սորէն քահանային ծանօթ խնդրոյն մասին ակնարկութիւն մը ընելով անուղղակի կերպով մատուանի ընել և ըսել կուզէ թէ խորհրդոյս կողմէ իր իրմբարութեան զրկուած պաշտօնական այն նամակը որուն պարունակութիւնը յիշեալ անարժան քահանային անպատե և զազիք արարքներուն ճշգրիտ պատկերացումն էր՝ անհիմն ամբաստանագիր մէ եղեր, և զայն ամբողջութեամբ չ'հրատարակած լինելը ըստ ամենայնի արդար և իրաւացի կ'գտնէ առարկելով որ քիչ ծամանակ յետոյ Աթէնքի թաղականութեան հասած պաշտօնական նամակ մը զըրպարութիւն կ'հոշակէր բոլոր այն աններելի զեղծումները և ստորին պանդուխտ մը մէջ աւելի ունեցած զըրուելի եղելութիւնները սրունք կ'վերագրուէր Սորէն քահանային հասցէին:

Կը զարմանանք սակայն որ «Իրաւունք» ի խմբագիրը երբեք ի նկատի չուենար կարեւոր կէտ մը՝ ըստ որում Աթէնքի թաղականութեան գըրած հերքումը ուրիշ բան չէր սպասեցողանէր բայց եթէ հաւաքուած նուիրատուութիւններուն ճշգրութիւնը, իոկ նոյն քահանային անլուր որիկայութիւնները եւ քստմեղի արարքները արդարացնող կամ մեղմացնող ոչ ինչ կար գրուած, ի՞նչ տրամաբանութեամբ ուրեմն կարելի է ըսել թէ կասկածելի հաշուետուութիւն մը կրնայ Սորէն քահանային անբասիր կեանքին եւ անոր քահանայութեան ընթացքին բացարձակ գրաւականը ըլլալ, իսկ մեր կողմէն գրուածներն ալ զրպարտութիւն, Չէ մի որ անմէն բանի նախանձախնդիր ըլլալէ աւելի պէտք է հետամուտ ըլլանք որ հանրութեան գործերը ղեկավարող ու անոր բարոյական եւ նիւթական շահերուն պատասխանատու եւ է մարմին կամ անհատ ըլլալ այն կրթական կամ եկեղեցական կարգ մը առաւելութիւններու հետ մէկտեղ պէտք է իր նկարագրին վրայ ցոյց տայ սրտի ու մտքի ազնուութիւն՝ միացած ուղղամտութեան, զօրաւոր կամքի եւ մաքուր բարոյականի հետ. եւ ոչ թէ կողու մի եւ վտանգութեան դէմ մեղանշող անլուր:

Ի դիմաց Թաղ. Սորհուրդի Ատենադպիր Վ. Ատենապետ Ա. Ազեհեան և Ս. Ալքուեան (Կնիք)

27/11 մայիս 1903
Գոնսթանշա

(*) Տեղեկագիրք կը հրատարակուի «Շարժում» թերթը համարով:

Սմբ.

ստորնութիւններ որոնք ժողովրդական գաղափարներու տեղի կուտան, ու անուղղակի կերպով կը վնասեն նաեւ անգլային նիւթական շահերուն, ինչպէս Աթէնքի քահանային նման անարժան եւ տգէտ պաշտօնակար մը եւ անոր պէս շատ մը ուրիշներ ալ որոնք այնքան տխուր համբաւ մը ձգած են բարձր Ռուսներու եւ Պուլկարիոյ հայ գաղութին մէջ իրենց դասապարտելի արարքներով:

Սորհուրդս իր պաշտօնավարութեան սկիզբէն մինչեւ այսօր պարտք համարած է իրեն մաքառիլ եւ սանձահարել բոլոր այն վատուիները որոնք ազգային շրջանակի մէջ ինչ-չորքի եւ ինչ աստիճանի ալ պատկանին իրենց վնասարեւ ընթացքով տանակոխ կընեն ազգային արժանապատուութիւնը եւ զիտակից կամ անգիտակ քաղերով արգելներ կը հանդիսանան ժողովուրդի բարոյական եւ նիւթական բարեխառնութեան հանդէպ: Ըստ այսմ երբ Աթէնքի սպառնորս քահանային գործած սրկայութիւններուն ենթակայ եւ ականատես մէկէ աւելի վկայութիւններ լսելով հաստատապէս համոզուած գոյացուցին կատարուած եղելութիւններու ճշգրութեան վրայ անմիջապէս տեղեկագրեց ուր որ անկ է, ու միեւնոյն ատեն չափաւորուած ու մեղմացած ձեւեր մը սակ Վճարութեան մէջ հրատարակութեան տարով զայն ուղղեց գոյացուցին հասարակութիւնը այդ անպատե ու վտանգի պաշտօնեայն:

Որքան զարմանալի նոյնքան անհասկանալի կը թուի մեզ որեմն երբ թէ Աթէնքի թաղականութիւնը եւ թէ մանաւանդ Քիրաւուքը իրմբարագրութիւնը որը նոյն քահանային սրիկայութիւնները պատկերացնող նամակ մը Պրայիլայէն ալ ստացած լինելը յայտարարած էր նախապէս ասոնց հիմնական սպառնացներու զրպարտութիւն կը հոշակեն մեր պաշտօնական նամակին պարունակութիւնը:

Ու քանի որ «Իրաւունք» ի խմբագրութիւնը խորհրդոյս ղեկանին կողմէն ստորագրուած նամակին պարունակութեան չ'հաւատալու անտեղի յամտութիւնը ցոյց կուտայ, մենք ալ ստիպուած կ'ըլինինք թարգմանել ու հրատարակութեան տալ Սորէն քահանային սրիկայութիւնները հաստատող տեղեկագրի մը պատճէնը՝ բըքնուած ու վաւերացուած է քաղաքիս ձեռնհաս իշխանութեան կողմէն:

—Սորհուրդս աւելորդ պիտի նկատէր անշուշտ սոյն վերջին միջոցին դիմելու եթէ սակայն մեր ուղղամտութիւնը կասկածի տակ ձգող հրապարակային յայտարարութիւններ չ'երեւէին:

Ի դիմաց Թաղ. Սորհուրդի Ատենադպիր Վ. Ատենապետ Ա. Ազեհեան և Ս. Ալքուեան (Կնիք)

27/11 մայիս 1903
Գոնսթանշա

(*) Տեղեկագիրք կը հրատարակուի «Շարժում» թերթը համարով:

Սմբ.

(Շաւ. Ասխուրդ քիւն Եւ վերջ)

Նամակը իմ առջեւ չէ եւ ոչ էլ մտքով կանցնէր, թէ այդ անմեղ, սոսկ անհատական զգացումներով ըզլող նամակը կնքող էր զանազան օվտանգաւորս ենթադրութիւններ անիթ տալ, որպէս զի նամակի ստանձնը պահէի: Բայց ինչպէս պ. Չիթճեանը մարգարէանուած էր, որպէս թէ մի ուրիշ վտանգ էլ թագնուած է—Ամերիկան մեր ամենատկար կողմն է—խօսքի տակ, Այս մարգարէութեան առաջ Մովսէսը նստանու է իր հրաշագործ զօրութեամբ... Այո՛, Ամերիկան մեր ամենատկար կողմն է, նախ՝ որովհետեւ միայն այստեղ գտնուելով խառն հին եւ նոր ընկերներ, տարիներ ընթացքով ստարբեր ուղղութեամբ միմեանցից հեռանալով, երբեք իրար հետ չըփուտ, յարաբերութիւն չուենալով, երկու կողմերի յարաբերութիւնները լինելով աւելի թշնամական քան բարեկամական, զիբուրեմն չէին կարող իրար հ. սկնալ, իրար հետ համաձայնիլ, ինչպէս անձամբ նկատեցի այդ երեւոյթը. երկրորդ որ հին տարածուած է եւ Գաշնակցութիւնը. Ուստի ամերիկան մեր ամենատկար կողմն է—գրածս դատարկ ֆիւրջ չէ, այլ ճշմարտութեան, իբրողութիւններով, փորձառութիւններով վրայ հիմնուած, եւ որպէսզի կուսակցական կարիք խնդիրներով ընկերներ մէջ միօրինակ մտածելու, խորհիւն հասկացողութիւն ստեղծի, անթաճեշտ էր ընտրել ուսեալ, հեռանալ, փորձած եւ ընդունակ գործիչ, համոզուած եմ, յանձնագ. Ս. Ստպանգրեւանի, ամենալաւ ընտրութիւն է կատարել, որ պը. Ս. Ստպանգրի լեան կարող գործիչ է, որին իրանք եւս անձամբ լաւ ճանաչուած են՝ ոչ մի առարկութիւն չի վերցնել, իսկ ինչ վերաբերում է պ. Սմբատեանին, նա կարող էր լինել յանդուգն յեղափոխական, բայց ոչ լաւ գործիչ, իսկ մենք նորա ոչ մի յատկութեան մասին ոչինչ չ'ըզլող չ'ըզլող չ'ըզլող խօսքին անսարկ համակերպեցինք, թէեւ մի եւ նոյն փամանակ նկատել տուինք թէ Ամերիկայ երկու գործիչ ուղարկելու հարկ չկայ եւ թէ պ. Սմբատեան իրանց նկարագրութեան վերայ հիմնուելով, աւելի յարմար եւ օգտակար էր երկիր մտցնել, այնու ամենայնիւ, քանի որ ես չէի ճանաչուած պ. Սմբատեանին, հետեւ արար չէի էլ կարող կարծիք յայտնել նրա մասին:

Վարչութեան անգամակից՝ ես, աւելի մօտ ծանօթ լինելով ամերիկային ինչպէս նախնիաց տողերում գրել եմ այդ մասին էլ խօսել եմ նրան, որ և այդ տեսանկյունով նամակով գրել էք Ուստի ընկերներին— մօտեցէք իրան, սրտերնիդ բացէք, ես ամէն ինչ խօսել եմ.— այս տողերը գրելին ես նկատի ունիլ և մի այլ հանգամանք: Իմ դեռ այնտեղ եղած ժամանակս ինչ որ թեր և դէս չըտկներ էր տարածուած նորա նկատման գլխաւորապէս մեր հին ընկերներ շրջանում և ուստի ինձ պէտք էր նորանց կասկածը փարատելու համար գրել մօտեցէք իրան եւ այլն. իսկ ինչ վերաբերում էր պր. Սմբատեանին, նորան էլ կը խօսէի նոյնը, եթէ

ՆՈՐԵԿԱՌՔԻՆ ՈՃԻՐԸ

(ԿԵՍՆՔԻ ՊԱՐՏՈՒՍԾՆԵՐԸ)

ԱՆՆՈՐՆԱԳԵՆ ՆԵՏԱՔԻՄՆԱՆ ԻՅ ՓՈՒՆՉՈՒՅԻՄՆԱՆ

ԱՄՈՒՅԱՆ ՆԻՍՏԱՆՈՒՅԻՄՆԱՆ

ԱՎՅՈՐ ԱԹԸ ԱՊՈՎ ՍԵՆ ԿՐԻՄՆԱՆ ԿՐ ՊԵՐՍԻ



Բաժանորդագրութեան համար պէ՛տ է դիմել

ՕՆՆԻԿ ԲԱՐՍԵՂՆԵՆԻ, ԿՊՊՐԻՔՆ-ՏՐԱՊՈՂԻՔԻՆ

ՏՊՐԱՔԱՆ՝ ԱՐԵՒԵԼԵԱՆ, ՎՈՌՆԱ — IMPRIMERIE ORIENTALE, VARNA (Bulgarie)

ՆՈՐԵԿԱՌՔԻՆ ՎԵՊ

Վ Ի Լ Ա Մ Ա Ր Ի Ի

ՄԵԾ ՅԱԶՈՂՈՒԹԻՒՆ !!!

ՇՈԳԵԿԱՌՔԻՆ ՈՃԻՐԸ

(ԿԵԱՆՔԻ ՊԱՐՏՈՒԱԾՆԵՐԸ)

ՀՌԶԱԿԱԻՈՐ ՎԷՊ ԺԻԻԼ ՄԱՐԻԻ
ԱՆՂՈՒՆԱՊԷՍ ԿԵՏԱՔՐՔՐԱՇԱՐԺ

ԵՒ

Պ Ա Տ Կ Ե Ր Ա Ջ Ա Ր Պ

Մայիս 30 ին լոյս պիտի տեսնէ սոյն եզական վէպը, զոր
ընտրած ենք մեծ խնամքով ֆրանսական արդի վէպերուն
հոյակապ շարքին մէջէն:

Սոյն վէպին հրատարակութեան ձեւին մէջ փոփոխու-
թիւն մը պիտի ներմուծուի ընթերցողներու աւելի դիւրու-
թիւն մը ընծայելու նպատակով:

Ինչպէս յայտնի է, «ԱՆԻԾԵԱԼ ՊԱՆԳՈԿԸ» շաբաթա-
կան երկու պրակ կը հրատարակուէր ու կը զրկուէր բա-
ժանորդաց, «ՇՈԳԵԿԱՌՔԻՆ ՈՃԻՐԸ» ամսական
հրատարակութիւն մը պիտի ըլլայ, ամիսը 8 պրակ մէկ ան-
գամէն պիտի զրկուի:

Մեր յարգոյ ընթերցողաց միեւնոյն դիւրութիւնը ընծայելու համար, պիտի շարունակենք վէպին բաժնեգիրն անփոփոխ պահել, այն է՝

Վառնայի համար 2,50, Վառնայէ դուրս 3 ֆր.

Ամերիկայի՝ 60 սէնթ.

Իսկ ձեռքէ պիտի վաճառուի 8 պրակը 45 սանթիմի:

Ըստ որում մեր գիտաւարութիւնն է ամէն ամիս հրատարակուած 8 պրակը զրկել ուղղակի մեր բաժանորդաց հասցէին, ուստի կը խնդրենք մեր ազնիւ բաժանորդներէն որ բարեհաճին անյապող մեզ հազորդել իրենց հասցէն, որ պէս զի վէպը լոյս տեսնելուն պէս կարենան ստանալ զայն:

Յառաջիկային պիտի խնայենք, մեր Ամերիկայի յարգոյ բաժանորդներուն դիւրութիւնը ըլլալու համար մասնաւոր տեղ մը, որոնք իրենց բաժնեգիրներն հոն յանձնեն:

Այս երրորդ վէպն է զոր ի լոյս կ'ընծայենք: Առջի երկուքին գտած քաջախրութիւնէն բաւական զոն մնացած ըլլալուս է որ այս երրորդին հրատարակութեանը կը մղուինք ձեռնարկել: Իրաւ է որ մեր ստանձնած աշխատութեան փոխարինութիւնը չէ որ կտանանք, սակայն այսօրինակ ձեռնարկներու յաջողութիւնը յարատեւութեան կապուած ըլլալով, գիտնալով առանց վարանելու կը շարունակենք մեր սկսած գործը, վստահ վերջապէս թէ վիպասէր հասարակութիւնը պիտի գիտնայ իր ամբողջ քայարելութիւններովը վարձատրել մեր զոհողութիւնները:

Հրատարակելի վէպը իր տենդավառ շահեկանութեամբը կը գերազանցէ նախորդները, եւ բացարձակապէս վստահ ենք թէ անիկա մեծ ընդունելութեան պիտի արժանանայ:

Ընթերցատէր հատարակութեան ճաշակին քիչ շատ մօտէն ծանօթ ըլլալով, հիմա հուրնէ միջոցները գտած ենք պատրաստել սալու գուռ ՀԱՅԿԱԿԱՆ ԿԵԱՆՔԻ վէպ մը, որուն հրատարակութիւնը կապուած պիտի ըլլայ «Շոգեկառքին Ոճրին» գտնելիք նիւթակառն քաջախրութիւնէն:
ՀՐԱՏԱՐԱԿԷ

Կը ծախուին սոյն սպարանէն լոյս տեսած հետեւեալ գիրքեր՝

ԱՆՁՆԱՍՊԱՆ ՄԵՌԵԱԸ

ԱՆԻԾԵԱԼ ՊԱՆԴՈԿԸ

Հեղինակութիւն ԹԲՆԷՆՆԷ ՏԸ ԲՕՆ-ՃԷԻ

Հեղինակութիւն ԼՈՒԻՍ ԴՅՈՒՍԵՖ

Ֆրանսերէնէ թարգմանուած

Ֆրանսերէնէ թարգմանուած

Գին 1,50 ֆր.

Գին 2,50 ֆր.

ՄԱՆԿԱՊԱՐՏԷԶԻ ԵՐԳԱՐԱՆ

Գին 40 սանթիմ

ՊԱՏՈՒՀԱՆԻՆ ՄՈՒՐՀԱԿԸ

ՏԻՒՐԱՆԸՆ ՖԷՆՏԻ

Թատեր. 7 արտը Պոլսոյ իրական կեանքէ քաղուած
Հեղինակութիւն ՏԻՒՐԱՆԻՆ, ՄԱՆԿԱՎԱՅՆՆԷ

Կատակերգ. 1 արտը հայերէն տառերով տաճկ. Լեզու
Ֆրանսերէնէ թարգմանուած

Գին 80 սանթիմ

Գին 30 սանթիմ

Իւրաքանչիւր գիրքին համար պէտք է աւելցնել 10 սանթիմ փոսթի ծախք:

ՏՊԱՐԱՆ ԱՐԵՒԵԼԵԱՆ

ՕՆՆԻԿ ԲԱՐՍԵՂԵԱՆԻ

Վ.Ա.ՈՒՆԱ.

Երկրորդ քաղ. Նիքիեկսիս փողոց (Սագալլո լեշիեի դեմ)

Կը ապագրուին հայերէն, պոլիարերէն, գաղղիերէն, յունարէն, աստիկերէն եւ այլ լեզուներով այցեառման հարսանեկան հրատարակիչ, ազգաբարութիւն, նամակագրութիւն, պահարան, մահապղծ, վաճառականական ամեն տեսակ գործեր, գիրք, լրագիր, եւ այլն:

Գունաւոր եւ ոսկեղօծ դարձագործերու համար ամեն լեզուէ ճոխ ստաներ եւ մասնաւոր գործիքներ կը գտնուին: Փորագրութիւն եւ կալվանորչաւոր եւս կը պատրաստուին:

ՄԵԾ ԽՆԱՄՔ ԵՒ ՄԱՔՐՈՒԹԻՒՆ

ԳԻՆԵՐԸ ՅՈՅԺ ԳԻՒՐԱՄԱՏՅԵԼԻ

Ուրիշ քաղաքներէ եկած յանձնարարութիւններ հետաքննարկելու եւ փութով կը կատարուին:

հասցէ:

ONNIK PARSEGHIAN

Imprimeur-Editeur

IMPRIMERIE ORIENTALE

VARNA. (BULGARIE)

պատեհութիւնը լինի որ ան տեսնուելու և Մօսկոյն — վեց օր մնաց այստեղ, մի անգամ միայն բարդ ունեցանք իրա հետ տեսնելու մօտ կէս ժամի շափ. մէկ էլ ճանապարհ ձգեւ. լու իրիկուրը մինչեւ կայարան հետը գնացի. և հենց այդ կարճ միջոցով խօսեցի թէ իրենց գլխաւոր ջանքը պիտի լինէր ընկերներէ մէջ համերայնութեան ոգին զարգացնել ամեն բանից առաջ, մինչդեռ մեր հրատարակ ընկերները երկպառակութեան թունաւոր ոգին կին տարածում իրանց յատուկ Ազգէնտի՛ պ. Զարեհ Կոչեանի միջոցով, իրանց գաղտնի հրատարակները ազգու գարձներու համար:

Իսկ այն թէ Պարսկաստանում և Ռուսաստանում իրերը լաւ երեւոյթ ունին, դա գրել եւ նորանց խրատելու համար. և փոխանակ մեր շարժման մեկնիչները ուրախանալու որ Ռուսաստանում և Պարսկաստանում իրերը լաւ երեւոյթ ունին, ընդհակառակը այդ — լաւ երեւոյթը — նորանց դեռնացրել. լեռներն է հանել: Բայց ինչո՞վ են մեզաւոր Ու. և Պ. որ այնտեղ խաղող կերպով բարգաւաճում են, ինչո՞վ են մեզաւոր որ այն տեղ օրն օրին սանգի նման մասնաճիւղերը բռնում են. ինչո՞վ են մեզաւոր նորանք, որ ասանակ կազմակերպութիւններ իրանց տեղեկադրերը մեզ ուղարկելով՝ ակնկառոյց սպասում են իրանց վաւերացման ու ցանկալի կնիքին, որ սպանց գործերը՝ քանաճութեամբ կանգնեցնելուց յետոյ, տակաւին սպասում են վտարացման, իսկ գոյութիւն ունեցող մասնաճիւղերը հսկայաքայլ առաջ գնում. մինչդեռ Ամերիկայում երկպառակութիւն է զարգանում, չնորհիւ մի քանի հացկատակներ: Ինչ վերաբերում է ծրագրին, որը նորնպէս Գանա. որ դաւաճութեան շարքն է դասել, գործ մասին ոչինչ ասելիք չունիմ. կը ցանկանայի կարգաբ միութեան վերջնագիրը, որտեղ և կը գտնէք մեր պատասխանը:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՎԵՐԱՐԿՈՒՆ

(ՊԱՏԿԵՐ)

Լուս գրելու էր. լուսինը ծանր լալում էր կապոյտ երկնակամարի վերայ և իւր կաթնաման շղերը սքփում վ... գիւղի վրայ: Այդ շղերից ընկան և Յակօի վրայ, բայց նա զողաց, սարսափեց զբանց սակ: Սառն էին այդ մի քանի շղերը և անմեղ արեան կաթիլներ լինէին, որ թափւում էին նրա գլխին, նա սարսափով թափ աւել գրայէն:

— Լուսինն էլ է ծիծաղում, այդ արեան կաթիլներն էլ նրա քրքիջներն են. նա թոյնը, որոնք խայթում, սարսափեցում են ինձ, մոռում էր Յակօն և վազում. Բայց ուր էր փայտում և ինչո՞ւ. այդ նրա համար պարզ չէր: Բայց նա վազում էր, այնպէս աւելի հանգիստ էր նրա համար:

Ահա նա կանգնեց. արիւց պահ մը լուսինն: — Բայց այս ի՞նչ է, ոտքերս այր-

Իսկ ինչ վերաբերում է «գաղտնի ծրագրին» դա միայն ցնորած մտքի ցնդարանութիւն է, այդպիսի բան ոչ գոյութիւն ունի և ոչ էլ կարող է ունենալ. եւ բոլորովին հրատարակում եմ մի այդպիսի ստոր գրապարտութեան պատասխանել. Բայց որ գրել եմ թէ հետզհետէ մեզ կը գրեմ. դորա մէջ ոչ մի թագուն միտք չկայ, այլ՝ մտերմութեան նշան, որ խոստանում եմ իմ ընկերական պարտականութիւնս կատարել:

Եթէ այսքանով բաւականանային իտարիքանները, էլի մի բան էր. սակայն շուտ է տարածում, որպէս թէ ես ուզել եմ կուսակցութեան զեկը յանձնել պ. Նազարբէգին օ. օ. միութեան, որի մէջ կուսակցութեան բաղդը իմ ձեռքումս է, որ ինչպէս ուզեմ այնպէս էլ անօրինեմ, ո՞վ տուա ինձ այդ գերմարդկային զօրութիւնը, որ ուզածս մարդը առաջ քաշեմ, չուզածս վաճարեմ. և կամ Մովսէսի մոգական գաւազանն ունիմ ձեռքումս որ մի հարւածով ամեն ինչ կերպարանափոխեմ օ. օ. միամիտ, աւելի ճիշտը. շարժման տրամաբանութիւն որտեղից դուրս բերւաւ այս եմթադրութիւնը: Ընթացում է, ես իմ ամբողջ էութեամբ յարգում եմ, սիրում եմ նազարբէգին, ոչ ոք կարող է և ոչ էլ իրաւունք ունի բռնադատել ինձ հակառակ վարելու: Իմ դէպի նազարբէգը ունեցեմ բարի տրամադրութիւններովս հանցեղծ այդ մասին ոչինչ չեմ գրել, մինչեւ անգամ մտաքովս չի անցել. թէ միայն իսկ եթէ գրած էլ լինէի, դորանով ես յանցանք չէի գործել, բայց եթէ կուսակցութիւնը նորան պաշտօնի կը հրաւիրէ, այդ իր դիմաւորութեան է այսպէս թէ այնպէս, ես կուսակցութեան բաղդի տնօրինողը չեմ. ոչ իսկ կարող եմ լինել: Իմանց այդ մակով, ինչպէս գրել եմ, իմ ցանկութիւնս էր իր ներկայ տնտեսական տխուր վիճակում նորան մի փոքր օգնութիւն հասցնելու նորան յորագող ընկերների կողմից, որը, այդ ընտա-

ւում են, միթէ՞ այս սեզ, փողոցում կրակ կայ... ո՞չ ոչ...

Յանկարծ նա յիշեց, հանեց կօշիկները և գէն շղարաց:

— Դայէք, Էհապէք ինձնից, ա. մօթի իրեր, այդ էլ նրա. նրա, Արի փաշայի աւածն է... ո՞հ, այժմ մի փոքր հանգիստ է:

Նա էլի վազեց, այժմ աւելի արագ ահա ձեռներ Սեփոնի տունը. նա կանգ առաւ. մի րոպէ լուս կանգնեց ոտքի, ապա նստեց, էլի կանգնեց:

— Այո՛, կը գնամ, կը խոստովանւում բոլորը, կասեմ յանցանքս և թողութիւն կը խնդրեմ. մասնում էր Յակօն: Մտեցաւ նա դրանք, ուզեց ծեծել:

— Ո՛հ, այս ի՞նչ է, իսկոյն ճշաց նա եւ յետ քաշեց:

Կարող եւ լուս էր այն տեղ, բայց Յակօն թւում էր, որ ամենքը այնտեղ փախում են, ամենքը քրքում, հատալում և նզովում են: Ան նիծում են նոյնիմակ արտաբեր, դուռը, ամենքը, ամենքը:

Չգային ցնցումներ մէջ նա երեւոյթում գողում էր և երկու ձեռքով ամուր սեղմել էր գլուխը:

— Ի՞նչ անեմ, ո՞ւր փախչեմ, հաւածում են ինձ, ամենքը հալածում, մոռում էլի նա:

Չայնեքը շարունակում էին. նա

նեկան նամակի գողութեամբ, այժմ դուռ է հրապարակի վերայ, մի բան և մի արարք, որ անեքելի է անողների կողմից և վստահ եմ, վաղ թէ ուշ, դորանք անպատիժ չեն մնալ:

Ընկերական բարեւանքով
Հ. Արզումանեանց
7 նոյեմբ. 1902
Լոսանոս

Ներկայ գրութեան՝ Պ. Հ. Արզումանեանցի հերթմնագրին ճիշտ ընդօրինակութիւնը ըլլալը կը վաւերացնէ վասնայի Հնչ: Մասնաճիւղը
Վարչութիւն
26 մարտ 1903
Վասնայ
(ԿՆԻԿ)

Ն.Մ.Ա.Ա.Տ.ՈՒՓ

ՅՕՊԻՉ. (Ձէյթունի Հանգանակութեան Մասնախումբին). — Կրնաք մեզ զրկել և մենք կը յանձնենք տեղույս Բաղական Խորհուրդին՝ Պօլսոյ Ազգային Պատրիարքարանի միջոցաւ — իր տեղը հասնելու համար:

ՁԵՐՈՒՆԻ ՀԱՄԱՐ Տօպրիչի Բիթէճիք գիւղէն Պ. Ալիսի Արքեպիսկոպի մեզ խնայած 5 ֆրանքը և վաւերացնէ Պ. Յարութիւն Խաչիկեանին տուած 10 ֆրանքը, որոնց համար գրուած էր արգէն նարժումի մէջ, յանձնեցինք տեղույս Բաղական Խորհուրդին:

Փախաւ սարսափով բռնած և Լուսինն էլ այս անգամ փայտում էր, ասեա նա էլ դողում էր, ասա նրան էլ հալածում էին: Ահա Յակօն կանգ առաւ, բայց միայն մի վայրկեան, նորից վազեց և այս անգամ ուղիղ Սաղաթնէլենց տունը: Զարգանողով, մահան սարսափով կանգնեց նա տան առաջ, այն օճախի առաջ, որի տղամարդ ջահիրը, գիւղի պարծանքը, օղգի սիրելին երէկ մորթեց, մորթեց իրեն ձեռով: Այժմ տեղ նա այնպէս չէր դողեց, սարսափեղ, ինչպէս այստեղ երբեք, սակայն ծաղկեցին, նա վազը ընկաւ: Լուսեցին հարիւրաւոր ձայներ:

— Անէ՛՛ք քեզ և անտարգ հայ:

— Կրակը գրիտը, փատնիչ. մի՛ մօտեցիր այս սուր օճախին:

— Հեռո՛՛ն, փախիր, ծածկիր սեւ ամօթը, փախիր:

— Ի՞նչ քեզ և անպատիւ, անտարտա մարդ:

Ամբողջ ծախանակ Յակօն ջղաձգութեան մէջ էր. նա ակամօքները պիտի սեղմել էր, բայց ցուրտ սարսափը, մահան սարսափի զողը նրան ցնցում, զպարտում էին. Ռոտի կանգնեց նա, դիտեց շուրջը. ամեն կողմից քրքիջներ, շարժումներ. նա փախաւ:

— Բայց ո՞ւր կորեմ, ամենքը սու մենքը հալածում են ինձ և իմ սեւ:

ՀՐԱՇԱԼԻ ԱՐԴԻՆԵՐ

Մ Ա Ջ Ի Ն Ե Ր Կ
ԱՆՆՄԱՆ

Կը մրցի եւրոպական առաջնակարգ ներկերու հետ:

Ազգեցութիւնը վայրկեանական, և բոլորովին անվնաս:

Մէկ ամսէն աւելի կը տեւէ:

Ձեռք կը բերուի բնական սեւ գոյն, նոյնպէս շագանակագոյն ըստ գործածութեան:

Դիմել Վասնայ Պ. Զարգանէլեանի կամ սփորձք պրք. Միհրան և Հրանդի:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ՊՈՒԿԱՐԻԱ

Սօֆիայի նախարարական տաղանայը վերջացաւ: Նոր գահընէք կազմուած է այսպէս:

Նախարարապետ և արտաքին գործոց — Բաշօ Բեթթօֆ, րեֆորմիստ:

Ներքին գործոց — Տ. Բեթթօֆ սթամպոլիսցի:

Արգարադատութեան — Կէնե Նատիէֆ սթամպոլիսցի:

Ելեւմտից — Մանուչէֆ:

Կրթական — Դիլմանօֆ, Հանքոզուտ շինութեանց, երկրագործական և առեւտրական — Տ. Վ. Փօփօֆ, Դատարարական — Սալօֆ:

Փական օճախը, իմ կիներ, իմ հայրենի գիւղը, ազա քարերը, այս պատերը, բոլորը, բոլորը հալածում են ինձ, անիծում, զուրս վաճառում իրենց անարգ, ստոր, մասնիչ զատակին: Ի՞նչ անեմ, այ հատալներ, էլի դուք ասէք, մի միջոց ցոց աւելէք...

— Ի՞նչ արեց Յուզան, գնա քեզ խեղդիր. ահա ինչով կարող ես մարքել սեւ ամօթը:

Շատերը փոփոսցին, շատերը խօսեցին, բայց Յակօն միայն ձեռներ Սեփոնի խօսքերը լսեց, լսեց շատ պարզ, շատ որոշ:

Յակօն փախաւ, արդէն գիւղից դուրս էր նա, կանգնեց նա. հայեացքը ձգեց նա գիւղի վրայ, նայեց երկար, մի քանի կաթիլ արցունքներ քամեցին նրա աչքերից:

Սիրմանայ ձովերը շեղջեղացին երան խեղցին արտասու քի այգը, կաթիլները եւ արեան կեղքարաւորով շաղ տեցին օրի մէջ: Կուրծքը դէմ տեց այդ հովերին: Նա ծծեց անյապ, աս գաւա շուռց առաւ, էլիս էլի ծծեց:

— Բայց այս ի՞նչ է, շնչաց նա, ստեւ արիւն եւ կուր տալիս, միթէ՞ Սիփան տարեքը արիւն են փղում: Անեն տեղ արիւն է հոսում, ասաւում իմ, ի՞նչ անեմ, Բայց ասում են, որ լեռները մարդի հանգստութիւն են տալիս, սցնտեղ, բարձրում:

Ք Ո Ւ Ր Ք Ի Ա

Ռուս և աստրիական կառավարութեանց զեպանները Բ. Իուռը և Սլաւի պալատին իրենց դիմումները նորոգեր են բարենորոգութեան գործադրութեանց մասին, բայց կերելայ թէ ոչ այնքան վստահութեամբ որքան երկու ամիս առաջ կընէին: Ասկէ զատ Ռուսիա աւելի նշանակելի ուրիշ դիմում մը ըրած է. Դեպքանը պահանջած է Սթրասիմայի պուլկար առջնորդին սրճակումը: Այս պահանջը անոր համար յատկանշական է որ Ռուսիա մինչև հիմա իբրև հաւատարիմ յունական պատրիարքութեան միշտ աննպաստ երեւցած է պուլկար էջարքութեան հերձուածին:

Գալով Ալպանացիներուն էօմէր Ռուշտի փաշա կը շարունակէ անոնց դէմ իր գործողութիւնները: Կարգ մը ըմբոստ ցեղերը պատժելէ մտքը կը քալէ Իբէքի վերայ ուր կը գտնուին բազմաթիւ ալպանացի ըմբոստ պետեր:

Սելանիկ հասեր է Սուլթանին խիճնապահներէն մինչև պատերազմական աստիճանն սխազոհ Լաիթի միջոցով: Բերելով որոշ հրամաններ: Ատեանը ազգէն ազատ արձակած է Սելանիկի դաւադրութեանց աննշան դերակատարները, որոնք պիտի զերկուին իրենց ծննդավայրերէն, ու ոստիկանութեան հսկողութեան տակ պիտի ըլլան:

Սելանիկի եւրոպական հիւպատոսները խորհուրդ տուեր են կուսակալին որպէսզի մահուան դատապարտուածներուն վճիռները հրապարակու չը գործադրուին:

Բուրն ժողովրդին յուզման տեղի չտալու համար:

Սելանիկի ֆրանսական և Ռուսական հիւպատոսարաններու տակէն պահանջի ահաններ զըստ նուաճ են, ապահովարար մակեդոնացի յեղափոխականներէ պատրաստուած:

Սելանիքէն Պօլիս փոխարուած և հիւանդանոցի մէջ զըրուած են բազմաթիւ թուրք վիրաւորուած զինուորներ և սպաններ:

Շէմսի փաշան երկար լնդըարում կը ունեցած է Ալպանացիներուն հետ Իբէքի մօտ, այս ընդհարման միջոցին Երեք հատ գիւղեր բոլորովին ոչնչացած են Ալպանացիներուն կողմէն եկած են 30 մեռածներ և 60 վիրուոր:

ԱՆԳԼԻԱ ԵՒ ՖՐԱՆՍԱ

Վերջերս Գոլիոյ Նրեւփոխանական Ժողովին և Մերակոյտին մէջ սկսեալ է տիրել այն գաղափարը թէ՛ երկրին համար մեծ օգուտներ պիտի տայ Անգլիոյ հետ լուրջ մտնեցում մը: Միանայցի խոհեմ հայրենասերներ յատկորէն կը տեսնեն ի՞նչ երկրին տընտեսական այս անձկութիւնը թէ շարունակու, վերջ ի վերջոյ աղէտալից հետեւանք մը պիտի ունենայ: Իսկ տնտեսական տագնապալի վիճակին պատճառն է այն անհազինձախքը, որ պետութիւնը ստիպուած է ընել բանակին և սպառազինութիւններուն համար: Վերջին քանի մը տարիներու միջոցին Ֆրանսայի ելեւմտա-

ցոյցը ծանր բացեր ունեցած է: Խելացի զաղիացիներ կը մտածեն Անգլիոյ մօտեցնել Ֆրանսան, սերտ յարաբերութիւններ հաստատելու նոյն իսկ իրաւարարութեան դաշնակից մը կնքելով՝ կարելի ընել զէնընկեցութիւնը և այդպէսով ազատել երկիրը այդ անօգուտ ծախքերէն:

Միւս կողմէն կան նաեւ հայրենասէր անգլիացիներ որոնք մեծ ճիգեր կը թափեն այս օգտակար մերձեցումը կարելի ընելու համար: Երեւոյթնա Պ. Բրէկլը, որ երկար տարիներէ ի վեր շանքեր գործ կը գնէ միջազգային իրաւարութիւն մը հաստատելու համար, վերջերս Փարիզ գացած էր այդ նպատակով: Քանի մը օր առաջ թղթակից մը Պ. Բրէկլըն շահագրգռական տեղեկութիւններ աւեր է:

Պ. Բրէկլը յայտարարէր է թէ Փարիզի ժողովրդին մէջ համակրական զգացումներ սկսեալ են զարգանալ: Անգլիոյ նկատմամբ և թէ այս բանը կըսէ 27 տարուան փորձառութիւնով մը: Բարիկ ժողովրդին մէջ որ առաջ թշնամական զգացումներ կը տիրէին Անգլիացիներու դատին հիմա մեծ փոփոխութիւն առաջ եկած է և այսօր ամբողջ Քարիզ միաձայնութեամբ փափաք կը յայտնէ Անգլիոյ հետ բարեկամանալու:

ՅՈՒՆԱՍՏԱՆ

Աթէնքի թուրք զեպանատան առաջին քարտուղարը արգարադատութեան նստարարին դիմած և շնորհակալութիւն

յայտնած է Յոյն կառավարութեան մակեդոնացի յեղափոխականներուն հանդէպ ձեռք առած ազգու միջոցներուն համար, և խնդրուած է որ յունաստանէն արտաքսուին յառաջիկային մէջ ալ մակեդոնացի պուլկարները:

Մարիսաի մէջ նորէն ձերբակալուած են 15 հոգի մակեդոնացիներ: որոնք Մակեդոնիա անցնել կը պատրաստուէին: ձերբակալողներուն մէջը նախկին պուլկար սպայ մըն ալ գտնուած է: Իրենց թով գտնուէր է նաեւ մակեդոնական գոմիթէի նշանով գլխարկներ:

ԱԶԴ

Մեր բոլոր այն բաժանորդները, որոնք դեռ չեն վճարած իրենց բաժնեկիները, թող հաճին անյապաղ մեզ հասցնել զանոնք: Կը յիշեցնենք իրենց թէ մեր բոլոր ծախքերը կանխիկ ըլլալով չենք կրնար թերթը ապահով ծախել:

Խ/Քարգ:

ՄԻՐԱՆԻ ԱՐԵՆԵԼՔԸ

Գրեց անգլիացի Ուիլիլմ Ուոթսընի բանաստեղծը և հայերէնի թարգմանեց Խոսրով: Կը ծախուի յիսուն սանթիմի դիմել թարգմանչին:

Մ. ՍՐՄԷՆ ԱՐՏՕՆԶ

43 Տուկրս Ռուս

Մեսսրօն (Անկղիզիտ)

Եւ կամ Ռուսիան Գրասպանախանի Վստնա

—

լաւ է անգործ է, չին լուում քրքիլներ եւ հատաչներ, այնտեղ չը կան մարդ-արարածներ: դաժան, հեղինական, խայթող դէմքեր: Ահա գալիս եմ, ա՛յ սարեր, գոնէ դուք ընդունէք ամենից մերժուած, հալածուած զաւակին:

Եւ նա վազեց. Վ... գիւղը մնաց յետեւը: նա վազում էր անգաղար, առանց յետեւը նայելու, չլինի թէ էլ լսի այն տանջանք սփռող քրքիլները: ցաւոտ կրծքերից թռած նախաշնչները:

Գ.

Արդէն ուշ գիշեր էր: Սիփանայ սպար հողերը թեթեւ կերպով գալիս շրջում էին ստորտում նստած Գ... գիւղի տները, ասես փոփսում, մի գոյժ է յայտնում ննջող գիւղացիներին, ապա անցնում եւ նայն փոփրտակը արարածում ամենուրեք:

Յակօն հասաւ Գ... գիւղը: նա միանգամայն յոգնած, զաղբած էր, ոտքերը չէին խոնարհուում նրա կամքին: այլեւ նա անկարող էր շարունակել, պէտք էր զգուշ մի փոքր հանգստանալ, թուլացած մամինը կապտորել: Գ... գիւղը լաւ ծանօթ էր նրան: նա մօտեցաւ ծերունի,

Սայոններնց դուռը ծծծեց, նրա ձեռները դողում էին: Չայն չկայ, չը չուկ չէ լուում, կարծես կենդանի չունէ չկայ այն տեղ, նա լաւ էր ճանաչում Մերունուն, չէ՞ որ նա քնել չկրէր, ո՛ր է ապա, այս ի՞նչ մեռելային դրութիւն է: նորից բաղխեց: Լսեց ծերունու սովորական խոսքոտ հազը:

—Ո՞վ է, ձայնեց ծերունին: —Ճամբորդ մարդ եմ, տեղ տեղ մի փոքր հանգստանամ ձեր օճախի տակ եւ էլի շարունակեմ ճանապարհս: Մերունի Սաղանը հերիք է իմացաւ, որ ճամբորդ է, էլ միւս պատճառաբանութիւնները աւելորդ են, թող գան, հանգստանան, մի քանի օր մնան: նա իսկոյն դուռը բացեց, ներս առաւ Յակօնը:

—Գնանք, գնանք, խեղճ մարդ, դու դողում ես, ի՞նչ է պատահել: դու չե՞ս կարողանում քայլել: Մերունին գրկեց նրան, ասես գրկում էր իր հարազատ որդուն, տարաւ տան, նստեցրեց թոնրի վրայ:

Դէ տաքացիր, լաւ տաքացիր, ոտներդ կախիր թոնրի: գլուխդ կանաչորէն թոնրի վրայ: ա՛յ այդպէս... շատ լաւ է: Յակօն երբում էր: Մերունին մի բարձ բերեց, Յակօն յենեց նրա վրայ, ոտքերը ազատ ձգեց թոնրի շուրթը: այդպէս շատ հանգիստ էր: Սարսափելի

էր նա դառել: զգզուած մազերը թափուել էին երեսի էրայ, ոտքերը քերտած մի քանի տեղերից, կուրծքը մերկ: դէմքը բոլորովին այսպիսիւն էր: աչքերը խորը ընկած, Տանջանքի եւ խոր վշտի կնիք էր կրում նրա դէմքը, որը ճրագի աղօտ լոյսի առաջ էլ աւելի սարսափելի էր երեւում: Մի քանի ժամայ ընթացքում որքա՛ն տանջանք... Այդպէս նա երկար մնաց, ծերունին անգաղար խնամում էր նրան: վէրքերը կապում: կաթ ունէր նա, կաթ էլ խրճուացրեց:

—Ո՛հ օրհնիք օճախը, սիրտս զովացաւ, մրմնջաց Յակօն, բաւա կանին հանգստացայ, այժմ կարող եմ նստել: Այստեղ, այս յարկի տակ շատ լաւ է: կուզէի միշտ մնալ այս տեղ, չին լուում այն քրքիլները, չկան այն տանջող դէմքերը, ինձ չեն հալածում...:

—Չեմ հաւանում քեզ, որդի, պարզ խօսիր: քեզ իմ տանից ոչ ոք չի հալածի, մնայ ինչքան կուզես, էս դողողացող ձեռներս շատերին է կերակրել, էս օջաղը շատ զարիւններ է օթեւան եղել: դու էլ մի զարիւր ես: քեզ էլ կը խնամեմ, Դէ՛, սաա՛, սաա՛, ո՛րտեղից ես գալիս, ս՛ւր ես գնում, ի՞նչ է պատահել քօզ, կուի բռնեցիր, հա՛, անօրէններին ես, նրանք կողպուեցին, ջարդեցին

քեզ, սաա՛, խօսէ...

—Ես գալիս եմ... գիւղից, միայն այսքան, ստուածք սիրես, էլ բան մի հարցրու:

—Ին սեւաւոր տեղից ես գալիս, հա՛, դէ՛ խօսի՛ր, ի՞նչ ես մարդի տան ջոււմ, սպանում: Երէկ սեւ: զուլում օր էր մեզ համար, ող մեր գեղը սեւաւորուել էր: Վա՛յ, կրակ ընկնի քո օջախը, անխիղճ Յակօ, իզովի քո զոհ անցնէր: էս սառ ջահիլին ինչպէս զոհ գնաց նրա պատճառով... խօսի՛ր, որդի, պատմիր էն վերան գիւղի ցաւը, նրա վիշտը...

Յակօն սկսեց դողալ, ցնցել: նա շփոթեց, սկսեց անհանգիստ շարժուիլ: անել, շուտ զալ այս ուսին կողմ:

—Դէ խօսի՛ր է, ինչ ես պապանձուել: լիզու շունիս վիշտ ցաւ: կըսկիծ, զարտ պատմել չգիտես, ինչ է էլ դրանից դուրս ի՞նչ ենք սեսել, այդ է եղել մեր անբաժան ընկերը, մեր աննորեայ դորձը... դէ, շուտ խօսիր, ցաւեցրու սիրտս, պատմիր, որ գոնէ մի քանի կաթիլ արիւն-արցունք քամել չորցած աչքերիցս եւ սիրտս հովանայ...

Ե. Տրակցիանց (Շարունակելի)

Отговорникъ Мурадъ-Ераносянъ

Печатница «Взаимность» Варна